

«Կավերացում են»

Հայաստանի Հանրապետության

Նախագահ Ռ. Քոչարյան

10 օգոստոսի 2005 թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

28 հուլիսի 2005 թվականի N 1120-Ն

1044 ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2004 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 12-Ի N 1170-Ն ՈՐՈՇՄԱՆ* ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության կառավարությունը որոշում է.

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2004 թվականի օգոստոսի 12-ի «Արտադրանքի կամ ծառայությունների համապատասխանության պարտադիր հավաստման համար կիրառվող սխեմաները և դրանց նույնականացման նշագրերը սահմանելու մասին» N 1170-Ն որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները՝

որոշման հավելվածի՝

ա) 11-րդ կետի «ա» և «բ» ենթակետերը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«ա» արտադրանքի խմբաքանակից մոնշառում, նույնականացում և տիպային մոնշի ընտրություն, տիպային մոնշի կամ արտադրանքի յուրաքանչյուր (եզակի) միավորի փորձարկում:

Արտադրանքի տիպային մոնշի ընտրությունը պետք է իրականացվի նույն նշանակության, նույն արտադրողի կողմից՝ գործողության նույն սկզբունքի վրա հիմնված կառուցվածքով և անվտանգությունը բնութագրող նույն սահմանված պահանջներով արտադրված խմբաքանակից:

Սերտիֆիկացման մարմինը համապատասխանության հավաստման գործընթացում փորձարկումների ծավալը որոշելու ժամանակ պետք է հաշվի առնի արտադրողի, մատակարարողի կամ վաճառողի կողմից ներկայացված փաստաթղթերի փորձաքննության արդյունքները: Փորձարկումների ծավալը չպետք է լինի ավելի, քան այն անհրաժեշտ է որոշակի արտադրանքի տեխնիկական կանոնակարգերով սահմանված պահանջներին արտադրանքի համապատասխանությունը հավաստելու համար,

բ) արտադրության վիճակի վերլուծություն կամ որակի կառավարման համակարգի գնահատում».

բ) 33-րդ կետի «ա» ենթակետում «արտադրանքի խմբաքանակի փորձարկում» բառերը փոխարինել «արտադրանքի խմբաքանակից մոնշառում, նույնականացում և տիպային մոնշի փորձարկում» բառերով.

գ) 85-րդ կետի «գ» և «դ» ենթակետերը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«գ» արտադրանքի խմբաքանակից մոնշառում, նույնականացում և տիպային մոնշի ընտրություն՝ սերտիֆիկացման մարմնի կողմից,

դ) տիպային մոնշների փորձարկումների անցկացում՝ հավատարմագրված փորձարկման լաբորատորիայում»:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

**Հայաստանի Հանրապետության
վարչապետ**

Ա. Մարգարյան

2005 թ. օգոստոսի 3
Երևան